

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից 2014թ. առաջին կիսամյակում կատարված աշխատանքների մասին

ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2014թ. տարեկան ծրագիրը պլանավորվել է ռիսկերի գնահատման հիման վրա և հանդիսանում է ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2014-2016թթ. ռազմավարական ծրագրի բաղկացուցիչ մասը: 2014թ. ներքին աուդիտի տարեկան ծրագիրը հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզպետի 26.12.2013թ. թիվ 702-Ա որոշմամբ, որով 2014թ. նախատեսվում է իրականացնել թվով 39 աուդիտ, որից 3-ը՝ մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներում, 3-ը՝ 100% պետական բաժնեմաս ունեցող ընկերություններում, 15-ը՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններում: 2014թ. առաջին կիսամյակում նախատեսված է եղել աուդիտ իրականացնել 21 միավորներում, այդ թվում.

1. <<Արզականի Խ.Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
2. <<Ջրաբերի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
3. Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին
4. Ճարտարապետաշինարարական բաժին
5. Բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժին
6. <<Սևաբերդի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
7. <<Մրգաշենի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
8. <<Բյուրեղավանի մարզադպրոց>> ՊՈԱԿ
9. <<Քասախի N 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
10. <<Պտղնիի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
11. <<Հատիսի Վ.Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
12. <<Քանաքեռավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
13. <<Հրազդանի Ա.Իսահակյանի անվան N 9 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
14. <<Բուժականի Գ.Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
15. <<Նաիրիի բժշկական կենտրոն>> ՓԲԸ
16. <<Ողջաբերդի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
17. <<Ակունքի ԱԱՊԿ>> ՓԲԸ
18. <<Չարենցավանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ
19. <<Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան N 4 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
20. <<Ալափարսի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
21. <<Հրազդանի N 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Բոլոր կազմակերպություններում նախատեսվել է իրականացվել համակարգի գնահատման աուդիտ՝ կազմակերպությունների ֆինանսական կառավարման և ներքին հսկողական համակարգերի արդյունավետության գնահատման նպատակով՝ նախապես նախանշելով այն գործընթացները (թիրախները), որոնք ռիսկերի գնահատման արդյունքում համարվել են գնահատման ենթակա: Աուդիտը իրականացվել է ներքին աուդիտի

մասնագիտական գործունեության ստանդարտներին և դրանց կիրառման մեթոդական ցուցումներին համապատասխան, որի արդյունքներով կազմվել է արձանագրություն և աուդիտորական հաշվետվություն: Հաշվետվություններում արտացոլված են տվյալ միավորի կողմից թույլ տրված թերությունները, բացթողումները, անհամապատասխանության դեպքերը, դրանց հայտնաբերման նպատակով կիրառված աուդիտի գործիքները, կատարված ընտրանքների հիմնավորումները: Աուդիտորական առաջադրանքների իրականացման ընթացքում հիմնականում որպես թիրախային գործառնություններ են ընտրվել

1. Կազմակերպության կողմից կատարված փաստացի և դրամարկղային ծախսերը,
2. Ներկայացված ֆինանսական և այլ բնույթի հաշվետվությունների արժանահավատությունը և դրանց ստանդարտների կիրառելի հիմունքներին համապատասխանությունը,
3. Ընտանեկան բժշկի կողմից իրականացվող բժշկական օգնության և սպասարկման կանխարգելիչ ծրագրերի (սկրինինգների) չափորոշիչին համապատասխանությունը,
4. Զուտ շահույթի տնօրինման, շահութաբաժնի հաշվարկման և վճարման գործընթացը,
5. Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի ստացումը, ձեռք բերումը, հատկացումը և հաշվետվությունների ներկայացումը,
6. Գնման ընթացակարգերի արձանագրություններում տեղ գտած տեղեկությունների, պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների պայմանագրին համապատասխանությունը,
7. Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների ամենամյա գույքագրման գործընթացը,
8. Կազմակերպության կողմից լիազոր մարմնին ներկայացված կոմպլեկտավորման վերաբերյալ տվյալների հավաստիությունը,
9. Կազմակերպության հաշվեկշռում գտնվող գույքի (տարածքի) վարձակալությամբ տրամադրման, վարձավճարների հաշվարկման և գանձման գործընթացները:

Աուդիտի արդյունքներով արձանագրված թերությունները, բացթողումները և անհամապատասխանության դեպքերը քննարկվել են ՀՀ Կոտայքի մարզպետարանում, որի հիման վրա տրվել են համապատասխան հանձնարարականներ (գործողությունների ծրագիր)՝ դրանց վերացման և հետագա գործունեությունը բարելավվելու ուղղությամբ:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից 2014թ-ի առաջին կիսամյակում նախատեսված աշխատանքները իրականացվել են ամբողջ ծավալով և դրանց արդյունքները ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Հարկ է նշել, որ ներքին աուդիտի որակի բարելավման նպատակով 2014թ. առաջին կիսամյակում բաժնի 2 մասնագետներ անցել են շարունակական մասնագիտական վերապատրաստում և ստացել համապատասխան հավաստագրեր, որն անշուշտ իր դրական ազդեցությունն է թողնում իրականացված աուդիտների որակի վրա: